# Հանրային կարծիքի ուսումնասիրություն

ՀՀ Կառավարության 2016թ. հունիսի 2-ի նիստում ընդունվել է առաջարկություն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Տաթևի ենթաշրջանի գյուղերի /Քաշունի, Տանձատափ, Տաթև, Հալիձոր, Շինուհայր, Խոտ, Սվարանց, Հարժիս/ միավորումից հետո Գորիսի տարածաշրջանում կձևավորվի համայնքների խոշորացման ևս երկու փունջ՝ Գորիս և Տեղ:

1. ՀՀ Սյունիքի մարզի **Գորիս**՝ Գորիս, Ակներ, Բարձրավան, Խնձորեսկ, Հարթաշեն, Ներքին Խնձորեսկ, Շուռնուխ, Որոտան, Վերիշեն, Քարահունջ (թվով 10)

2. ՀՀ Սյունիքի մարզի **Տեղ**՝ Տեղ, Արավուս, Խնածախ, Խոզնավար, Կոռնիձոր, Վաղատուր, Քարաշեն (թվով 7)

Այս համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ տեղի կունենան 2016թ. **սեպտեմբերի 18-ին**, որից հետո կդադարեցվեն մինչ այդ գործող տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները:

Գորիսի մամուլի ակումբը իրականացրել է հարցում՝ պարզելու, թե տվյալ համայնքների բնակիչներիը ինչքանով են իրազեկ խոշորացման գործընթացից, ՏԻՄ մարմինների գործառույթներից, առաջիկա ՏԻՄ ընտրություններից:

Հանրային կարծիքի ուսումնասիրության համար օգտագործել ենք հարցաթերթիկներով հարցման միջոցը: Հարցումներն իրականացվել են **Գորիս, Քարահունջ, Ակներ, Վերիշեն, Հարթաշեն, Խնածախ, Խոզնավար, Տեղ, Կոռնիձոր, Խնձորեսկ** համայնքներում, սակայն մնացած համայնքների բնակիչները հնարավորություն են ունեցել հարցմանը մասնակցել առցանց ռեժիմով /https://goo.gl/07GBMi/:

Հարցմանը մասնակցել **356** հոգի, հարցվողների միջին տարիքը **41** է, սեռային հարաբերակցությունը՝ **54%**-ը՝ կանայք, **46%**-ը՝ տղամարդիկ:

# Հանրային կարծիքի ուսումնասիրության արդյունքները







Ճանաչո՞ւմ եք արդյոք Ձեր համայնքի ներկայիս ղեկավարին:
8%
92%
Այո
Ոչ


Ձեր համայնքի ավագանու անդամներից քանիսի՞ն եք ճանաչում:
25%
9%
16%
20%
30%
Բոլորին
Գրեթե բոլորին
Կեսին
Ոմանց
Ոչ մեկին


Վերջին 6 ամիսներին մասնակցե՞լ եք հետևյալ միջոցառումներին:
3%
2%
6%
89%
Համայնքի ավագանու նիստեր
Համայնքի բյուջեի վերաբերյալ լսումների/քննարկումների
ՀԿ-ների կողմից կազմակերպած քննարկումների, իրազեկման միջոցառումների
Թվարկվածներից ոչ մեկին


Արդյոք տեղյակ եք, որ սեպտեմբերի 18-ին տեղի կունենան ՏԻՄ ընտրություններ:
17%
83%
Այո
Ոչ


Մասնակցելու եք արդյոք սեպտեմբերի
18-ին կայանալիք ՏԻՄ ընտրություններին
9%
17%
74%
Այո
Ոչ
Դժվարանում եմ պատասխանել